

## **„Շտիգեն,, կազմակերպության հիմնադիր տնօրենը հանդիպում ունեցավ Գեղարքունիքի մարզպետի հետ**

22.03.2018

Ամենացրտաշունչ պայմաններում անգամ Գեղարքունիքի մարզում հնարավոր է արևային էներգիա ստանալ, քանզի մարզն ամենաարևայինն է: Օգտագործելով այդ ռեսուրսը՝ „Շտիգեն,, կազմակերպությունն արդեն 7 տարի է, ինչ մարզում իրականացնում է „Արևային համայնք,, ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում տեղադրվում են արևային ջրատաքացուցիչներ և արևային էներգիայի համակարգեր: Ըստ մասնագետների հաշվարկների՝ մարզի տնտեսությունների կողմից տարեցտարի ավելանում է արևային ջրատաքացուցիչների տեղադրման պահանջարկը: „Շտիգեն,, կազմակերպության հիմնադիր տնօրեն Հայկ Շեկյանի հավաստմամբ տեղադրվող սարքավորման գինը 440 հազար դրամ է՝ շուկայական արժեքից համեմատաբար էժան: Կազմակերպության տնօրենը իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ մարտի 21-ին գրույց ունեցավ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի հետ: Խոսվեց մարզի համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված խնդիրների և հնարավորությունների մասին: Առաջիկայում „Շտիգենը,, արևային ջրատաքացուցիչներ կտեղադրի նաև Գավառում, Գանձակում, Վարդենիկում և Մարտունիում: